Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի, Ռուսաստանի ամենամեծ թեմի՝ առաջնորդի պաշտօնում,— պարգևատրուելով ս. Ստանիսլաւի օրդէնով։ Նորին բարձր սրբազնութիւնը ունի նաև ուրիշ պարգևներ»։

Ցաւում ենք, որ նորին բարձր սրբազնութեան առանձին համեստութեան պատճառով մենք զրկուած ենք նորա բազմարդիւն գործունէութեան մասին կարևոր նիւթեր ձեռքի տակ ունենալուց, որովհետև նորին բարձր սրբազնութիւնը այն հոգևորականներից չէ, որոնք իւրեանց գործունէութիւնը հռչակելու համար առանձին գործակալներ են ունենում։ Ցայտնի է որ նա միշտ համեստօրէն և գործի համար գործող մարդ է եղել և ոչ ի ցոյց մարդկան։

Վերոյիշեալ ռուս լրագրի յօդուածին մենք կաւելացնենք, որ անցեալ կաթուղիկոսական ընտրութեան ժամանակ Կովկասի հայ ինտելիգենցիայի մի լուրջ մասի կաթուղիկոսական կանդիտատներից մէկը համարւում էր սրբազան Ներսէս Աբքեպիսկոպոսը։

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՁԽՈՒԹԻՒՆ

Մեզ հաղորդում են Կ. Պոլսից, որ անցեալները տեղի է ունեցել այնտեղ Սահակ-Մեսրոպեան Մրցանակի Ցանձնաժողովի ձեռքով ընտրելագոյն քարոզների մրցանակաբաշխութիւնը։ 133 հատ կեղծանունով առաջարկուած քարոզներից առաջնակարգ մրցանակի են արժանացել քսանեերկուսը, որոնցից միայն մէկի հեղինակն է Ռուսաստանցի հայ հոգևորական, այն է Բագուի ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան արժ. Հ. Ներսէս քահ. Տէր Կարապետեանցը։ Քարոզի նիւթն է «Խօսք Ցարութեան», որ ասուած է յիշեալ եկեղեցում։